ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<16 >> << նոյեմբեր >> 2015 թ *N 129*

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԽԻԿԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2.2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (69-3.1-12) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի եզրակացությունը և Խիկար Խաչատրյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2015 թվականի նոյեմբերի 16-ից Խիկար Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (69-3.1-12) պաշտոնում:
2. Հաշվապահին՝ աշխատավարձը վճարել օրենքով սահմանված կարգով:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ